

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում և այլ օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծերի վերաբերյալ

ՀՀ արդարադատության նախարարությունը ս.թ. մայիսի 22-ին հրապարակել է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ օրենք) լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագիծը (այսուհետ՝ նախագիծ), ինչպես նաև առնչվող այլ օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծեր (այսուհետ՝ նախագծային փաթեթ):

Չնայած նախագծային փաթեթով առաջարկվող կարգավորումները որոշ կետերով մեղմում են առնչվող օրենքների հակասությունները, այդուհանդերձ, այն բարելավման կարիք ունի: Մասնավորապես, վարչարարությանն առնչվող հարցերում արդյունավետությունն ավելացնելու փոխարեն կարող է անորոշության և վեճերի ավելորդ հիմքեր առաջանան:

Բացի այդ, հերթական անգամ նախագծերն առաջարկվել են հապշտապ, առանց շահագրգիռ կողմերի հետ առանձին կարգավորումների նպատակահարմարությունը քննարկելու, ինչի հետևանքով դրանցում առկա են մի շարք խնդրահարույց կետեր:

Նախագծերի հետ կապված նկատառումներն ու առաջարկությունները ներկայացված են ստորև:

1. Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 4-րդ գլուխը լրացնել նոր 20.1-րդ հոդվածով՝ սահմանելով իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների բացահայտման կանոնները խախտելու հետ կապված վարչական վարույթի առանձնահատկությունները:

Տվյալ հոդվածի 1-ին մասում հղում է կատարվում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին, որի 16-րդ հոդվածով «Հայաստանի Հանրապետության տերիտորիայում գտնվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ենթակա են վարչական պատասխանատվության ԽՍՀՄ քաղաքացիների հետ ընդհանուր հիմունքներով»:

Առաջարկ. Անհրաժեշտ է պարզաբանել, թե օրինակ իրական շահառուների հայտարարագիր ներկայացնող ընկերության տնօրենը, ով օտարերկրյա քաղաքացի է, ինչպես է ենթարկվելու օրինակ հայտարարագիր չներկայացնելու կամ կեղծ տեղեկություններ ներկայացնելու համար սահմանված պատասխանատվության: Արդյո՞ք առկա է որևէ բացառություն, թե՛ ո՛չ: Եթե այո, ապա նախագծային փաթեթում առաջարկում ենք ներառել այնպիսի կարգավորումներ, որոնք կլուծեն այդ խնդիրը: Միաժամանակ, առաջարկվում է իրական շահառուների հայտարարագրման պահանջները օտարերկրյա քաղաքացիների կողմից խախտելու դեպքում որպես լրացուցիչ միջոց սահմանել նաև տարածքից վտարելը:

2. Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է. «Սույն օրենքով սահմանված՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքում սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու վերաբերյալ վարչական վարույթը բաղկացած է խախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից»: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից»: Այսպիսով՝ առաջարկվող Նախագծում դուրս է մնում հարուցման, այդ թվում՝ վարույթի մասնակիցների ծանուցման փուլը:

Առաջարկ. Հիմնավորել հարուցման, այդ թվում՝ ծանուցման փուլի դուրսբերումն իրական շահառուների վերաբերյալ վարչական վարույթից:

3. Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է՝ «Սույն օրենքով սահմանված՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքում սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու վերաբերյալ վարչական վարույթը բաղկացած է խախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից»: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթի իրականացնող վարչական մարմնի կողմից իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու՝ սույն օրենքով նախատեսված պահանջներին համապատասխանությունը ստուգելու գործընթացն է»:

Եապես տարբերվում են տվյալ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում տրված վարույթի ձևակերպումները: Այսպես՝ 4-րդ մասում վարչական վարույթը նախատեսվում է օրենքով սահմանված ժամկետում տեղեկություններ չներկայացնելու դեպքի առումով, իսկ 5-րդ մասում՝ ոչ միայն ժամկետում չներկայացնելու, այլև ընդհանուր՝ օրենքով նախատեսված պահանջներին համապատասխանությունը ստուգելու առումով, ուստի հոդվածի նշված մասերը չեն համընկնում:

Առաջարկ. Համահունչ դարձնել տվյալ հոդվածի մասերը: Կամ պետք է 5-րդ մասում նշվի միայն ժամկետում չներկայացնելու խախտումը ստուգելու խնդիրը, կամ 4-րդն ընդարձակվի՝ ներառելով ժամկետից դուրս օրենքի բոլոր պահանջները: Առաջին լուծման դեպքում, սակայն, հարց է ծագելու, թե ժամկետում չներկայացնելը էլեկտրոնային համակարգով հավաստված լինելու պարագայում ինչ հանգամանքի լրացուցիչ ստուգում է իրականացնում մարմինը, եթե խախտումն ապացուցված է:

4. Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվում է փոխել օրենքի 60.1-րդ հոդվածի ձևակերպումն ու իրական շահառուների բացահայտման, գրանցման և տվյալների արժանահավատության ապահովման վերաբերյալ կարգավորումներն ու պահանջները չտարածել «պետական կամ համայնքային մասնակցությամբ ընկերությունների, որոնց բաժնետոմսերի կամ բաժնեմասերի 100 տոկոսն ուղղակիորեն պատկանում է պետությանը կամ համայնքին, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կողմից հիմնադրված հիմնադրամների, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների» վրա: Սա առաջարկվում է ի լրումն արդեն իսկ առկա՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց, այն է՝ բաժնետիրական ընկերությունների, որոնց իրական շահառուների թափանցիկությունը չի ապահովվում:

Պետք է նշել, որ առաջարկվող փոփոխությունը որևէ կերպ հիմնավորված չէ Նախագծի փաթեթում: Մյուս կողմից, այսպիսի փոփոխությունը հակասում է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) Ստանդարտի պահանջներին: Դեռևս 2021 թվականին ԱՃԹՆ միջազգային վավերացման 1-ին փուլում Հայաստանին ներկայացվել է առաջարկ¹՝ հրապարակել ընդերքօգտագործման իրավունք ունեցող կամ դրա համար դիմող բոլոր ընկերությունների նաև իրավական սեփականատերերի (մասնակիցների), այդ թվում՝ փակ բաժնետիրական ընկերությունների մասնակիցների մասին տեղեկությունները: Բացի այդ, ԱՃԹՆ-ի ուղեցույցով² առաջարկվում է ներկայացնել տեղեկատվություն, թե որ պետական գործակալությունն է կառավարում պետական սեփականությունը/մասնաբաժինը, իսկ ընկերությունում պետության մասնակցության դեպքում՝ տեղեկություն այն մասին, թե ինչպես է իրականացվում մասնակցությունը կամ վերահսկողությունը:

Առաջարկվող փոփոխությունը հարցականի տակ է դնելու ԱՃԹՆ բարեհաջող իրականացման շնորհիվ գրանցած հաջողությունը, ինչպես նաև վտանգելու է՝ առհասարակ իրական շահառուների թափանցիկության ոլորտում Հայաստանի առաջընթացը:

Առաջարկ. Նախագծից հանել տվյալ լրացումը: Փոխարենը՝ նախատեսել իրավակարգավորումներ և համապատասխան տեխնիկական լուծումներ՝ ապահովելու Կենտրոնական բանկի և Իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի միջև տվյալների արդյունավետ փոխանակումը և բաժնետիրական ընկերությունների ու դրանց իրական շահառուների ներառումը պետական միասնական և արդիականացված ռեգիստրում՝ դրանով նաև ապահովելու իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալների ամբողջականությունը:

5. Նախագծի 13-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 60.4-րդ հոդվածում լրացնել նոր՝ 5-րդ մաս. «Իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցումն իրականացվում է ինքնաշխատ եղանակով՝ էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հիման վրա՝ այն էլեկտրոնային եղանակով մուտքագրելուց հետո՝ 2-րդ աշխատանքային օրը»:

Առաջարկ. Անհրաժեշտ է հստակեցում, թե ինքնաշխատ աշխատելու դեպքում ինչու հենց հաջորդ աշխատանքային օրը գրանցումը չի իրականացվում:

6. Նախագծի 14-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 60.5-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Գործակալությունն իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ապահովման նպատակով՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերով հարուցված վարչական վարույթների քննության միջոցով իրականացնում է ընթացիկ վերահսկողություն»... Բացի այդ, Նախագծով առաջարկվում է տվյալ հոդվածը լրացնել նոր՝ 3.1 մասով՝ «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը սույն օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացնելու պարտականության կատարումը ստուգելու նպատակով Գործակալությունը յուրաքանչյուր տարի՝ հաշվի

¹ <https://eiti.org/board-decision/2021-32>

² <https://eiti.org/guidance-notes/beneficial-ownership-model-declaration-form>

առնելով իրավաբանական անձանց գործունեության ռիսկայնության չափանիշները, կարող է հարուցել վարչական վարույթներ: Իրավաբանական անձանց գործունեության ռիսկայնության չափանիշների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը, դրանց հաշվարկման և գնահատման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Պետք է նշել, որ գործող օրենսդրությամբ ստուգումներ և վերահսկողական գործառնություններ իրականացնելու իրավասությունները տրված են տեսչական մարմիններին և Պետական եկամուտների կոմիտեին: Այս առումով, «վերահսկողություն» իրականացնելու կամ «ստուգում» իրականացնելու եզրույթների գործածությունն արդեն իսկ խնդրահարույց է՝ հաշվի առնելով, որ այդ դեպքում «Ստուգումների մասին» ՀՀ օրենքի դրույթները կարող են տարածվել այնինչ գործակալությունը տեսչական մարմին չէ, իսկ Արդարադատության նախարարությունը ևս չունի տեսչություն:

Միաժամանակ, սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելը ընկերությունների ռիսկայնության հիման վրա նույնպես կարող է խնդրահարույց լինել, քանի որ, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի, վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Տվյալ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար»: Ընդ որում, հոդվածի 9-ի համաձայն «Վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում»:

Ուստի, եթե անգամ ռիսկայնության գնահատման հսկողության (ոչ վերահսկողության) համակարգ է ներմուծվում գործակալության աշխատանքի համար, դրա գործուն ապահովման համար անհրաժեշտ է, որ գործակալությունն այդ մեթոդաբանությունն օգտագործի ռիսկերի վերհանման, ապա դրանց հիման վրա այլ մարմիններին արդեն իսկ ընկերության կողմից տրամադրված տեղեկությունների հարցման, վերլուծության համար, ինչպես նաև դրա արդյունքում խախտման հայտնաբերման դեպքում և հիմքով միայն հարուցի վարչական վարույթ: Հակառակ դեպքում, առանց խախտման հիմքերի վարույթի հարուցումը նաև պարունակում է վարչական ռեսուրսի ոչ նպատակային վատնման ռիսկ:

Արժե նաև նշել, որ տեսչական ստուգումների դեպքում ռիսկայնության հիմնական հասկացությունները, մակարդակները, տեսակները սահմանված են համապատասխան օրենքով, որից հետագայում բխում է մեթոդաբանությունը սահմանող ենթաօրենսդրական ակտը, ինչն էլ ապահովում է իրավական որոշակիություն:

Առաջարկ. Վերանայել եզրույթների գործածությունը, նախատեսել, որ Գործակալությունը վարչական վարույթ հարուցի ոչ թե ռիսկայնության հիման վրա, այլ դրա հիման վրա կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված խախտումների հիման վրա, ինչպես նաև օրենքով սահմանել ռիսկայնությանն առնչվող հասկացությունները:

7. Նախագծի 14-րդ հոդվածով առաջարկվում է, որ «Գործակալությունն իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ապահովման նպատակով՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերով հարուցված վարչական վարույթների քննության միջոցով իրականացնում է ընթացիկ վերահսկողություն»: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինն, իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին օրենքով սահմանված կարգով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է: Ընդ որում, 36-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտ ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն»:

Ինչպես արդեն նշվեց, ըստ Նախագծում նշված առանձնահատկությունների, Գործակալությունը ծանուցում չի իրականացնում, լսումներ չի կազմակերպում վարույթի մասնակիցների, այն է՝ վարչական ակտի հասցեատիրոջ հետ սահմանված ժամկետում հայտարարագիրը չներկայացնելու դեպքում, ուստի տրամաբանական է, որ այն վարչական ակտն ընդունի մինչև երեք օրվա ընթացքում: Այլապես, եթե կա ավելի երկար ժամկետի, հանգամանքներ ստուգելու և պարզելու անհրաժեշտություն, տրամաբանական է, որ վարույթի մասնակիցները ծանուցվեն և մասնակցելու ու արտահայտվելու իրավունք ունենան:

Առաջարկ. Հստակեցնել, որ պետք է վարչական ակտն ընդունվի մինչև երեք օր ժամկետում, այլապես նախատեսել վարույթի մասնակիցներին ծանուցելու և լսումներ կազմակերպելու գործառույթ:

8. Նախագծի հոդված 15-ով առաջարկվում է փոխել օրենքի 61-րդ հոդվածի շարադրանքը՝ անդրադառնալով իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում առկա տեղեկությունների թղթային կրիչով տրամադրման կարգին՝ դրա համար նախատեսելով «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարում:

Ինչպես նշվել է բազմիցս, հարկավոր է ընկերությունների մասին տվյալները առցանց հասանելի դարձնել բացի զանգվածային լրատվամիջոցներից նաև հանրության շահագրգիռ այլ շրջանակների, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների, հետազոտողների կողմից հանրային վերահսկողության համար, ինչը կարող է եապես աջակցել տվյալների արժանահավատության ստուգմանը:

Ավելորդ չէ նկատել, որ իրական շահառուների՝ «բաց, հանրային ռեգիստրի գործարկումը» ներառված է եղել Բաց կառավարման գործընկերության 2018-2020 թվականների

գործողությունների պլանում և նշվել որպես իրականացված³ հիմք ընդունելով 2021 թվականի հունիսի 3-ին Օրենքում ընդունված փոփոխությունները:

Առաջարկ. Անհրաժեշտ է նախատեսել իրավակարգավորումներ՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պահվող տեղեկատվությունն անվճար և ամբողջությամբ՝ բաց տվյալների և բաց աղբյուրի ձևաչափով հասանելի դարձնելու հանրության ներկայացուցիչների համար, այդ թվում՝ նախատեսելով ոչ հավաստի տեղեկությունների վերաբերյալ լիազոր մարմնի հետ հետադարձ կապ ապահովելու հնարավորություն:

9. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների փոփոխությունների պետական միասնական գրանցամատյանում գրառման դեպքում պահանջվում է 10,000 ՀՀ դրամի վճարում: Սա անհամաչափ բեռ կարող է դիտարկվել առնվազն քաղհասարակության կազմակերպությունների համար: Մյուս կողմից, իրական շահառուների վերաբերյալ տվյալները չներկայացնելու համար նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Առաջարկ. Նախագծային փաթեթում ներառել փոփոխություն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում վերանայելով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պահվող իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվության փոփոխության դեպքում փոփոխության պետական գրանցման գումարի չափը՝ առնվազն ոչ առևտրային կազմակերպությունների համար:

9. Նախագծի ողջ փաթեթում, ինչպես նաև գործող մի շարք օրենքներում առկա է մի շարք եզրույթներ խառնաշփոթ: Այսպես, օգտագործվում են «հայտարարագիր կամ հայտարարի ներկայացում», «շահառուների վերաբերյալ տեղեկություններ կամ շահառուների վերաբերյալ տեղեկությունների ներկայացում», «շահառուների վերաբերյալ փոփոխված տեղեկություններ» եզրույթները: Դրանք պետք է միասնականացվեն կամ հստակեցվեն, քանի որ կիրարկման ժամանակ կարող են հանգեցնել չարաշահումների կամ պարզապես հանդիսանալ չկիրարկելու համար հարմար առիթ:

Օրինակ, Քրեական օրենսգրքում նշված է «իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող իրավասու պետական մարմին իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացրած անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելը...», իսկ իրավաբանական անձանց գրանցման օրենքում տվյալ անձը հայտարարագրից բացի ամեն տարի ներկայացնում է՝ 1) հաստատում առ այն, որ իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագիրը պարունակում է արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ 2) փոփոխված տեղեկություններ իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ:

Առաջարկ. Նախագծային փաթեթում և առնչվող օրենքներում հստակեցնել եզրույթները:

11. Իրական շահառուների հայտարարագրման համակարգի և դրա վարչարարության արդյունավետությունը կախված է նաև արդյունավետ պատասխանատվության միջոցներ սահմանելուց: Գործող օրենսդրությամբ քրեական պատասխանատվություն է սահմանված

³ <https://ogp.gov.am/hy/commitments/6>

հայտարարագիր ներկայացնելու իրավասություն ունեցող անձի կողմից հարցումներին չպատասխանելու համար: Այնինչ, կրկին հարց է առաջանում օտարերկրյա քաղաքացիների կողմից հարցումներին չպատասխանելու դեպքում վերջիններիս պատասխանատվության կիրառման հնարավորության մասով: Հարցը կարևոր է ոչ այնքան անգամ տվյալ քաղաքացուն պատասխանատվության չենթարկելու տեսանկյունից, այլ նրանով, որ հայտարարագիր ներկայացնողներն այս բացից օգտվելով կարող են տեղեկությունների չներկայացումը հիմնավորել իրենց հարցումներին օտարերկրյա քաղաքացիների կողմից չպատասխանելու հիմքով և չարաշահել այդ իրավիճակը: Ուստի, անհրաժեշտ է այս մասով ևս դիտարկել գործուն միջոցներ սահմանելու այլընտրանքները և հայտարարագիր ներկայացնողների կողմից չարաշահումների հնարավորինս սահմանափակումները:

Առաջարկ. Վերանայել և ուժեղացնել իրական շահառուների հայտարարագրմանն ամնչվող պատասխանատվությանը վերաբերող կարգավորումները:

ԱՃԹՆ Բազմաշահառու խմբի անդամներ

- Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
- «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ
- «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ
- «Հայաստանի անտառներ» ՀԿ
- «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ